քէին և գիտաւորք, և զապաստանեալք· զի ցեղով 'ի հնդկաց էին. քանզի կուռպաշտն որք յայնմ տեղւոջ էին՝ պատճառաւն այսէ.

Դեմետր և գիսանէ իշխանք էին հնդկաց և եղբարք ցեղով. և փախուցեալք 'ի թագաւորէն հնդկաց՝ հալածեցան և եկին մինչև յաշխարհս հայոց. Եւ իբրև եկին առ թագաւորն հայոց վաղարշակ՝ ետ նա զերկիրն տարօնոյ ընդ իշխանութեամբ նոցա. յորում շինեցին քաղաք և կոչեցին վիշապ. որք եկեալ յաշտիշատ՝ կանգնեցին զկուռսն զայնոսիկ զոր 'ի հնդիկս պաշտէին. Եւ յետ հնգետասան ամի եսպան թագաւորն զերկոսեանն և զտեղւոյն իշխանութիւն ետ որդւոց նոցա կուառայ և մեղտեսայ և հոռեայ. Եւ շինեաց կուառ իւր աւան, և կոչեաց յանուն իւր կուառս. և մեղտես շինեաց աւան 'ի դաշտին, և կոչեաց մեղտի. Իսկ կրտսերն անցեալ 'ի գաւառն պալունեաց՝ շինեաց անդ աւան և կոչեաց հոռեան

հոտանա։ Եւ յետ ժամանակաց խոր-
հուրդ առեալ կուռարս եւ մեղուս եւ հու-
ռեան՝ ելին ՚ի լեառն քարքէ. եւ տեսեալ
զայն տեղի զի ընդ արձակուն էր որոյ,
եւ հովաբեր խոտոյ, եւ փայտի առատա-
ձեռն շինեցին զնա դաստակերտ. եւ կանգ-
նեցին ՚ի նմա երկուս կուռս՝ զմինն յա-
նուն գիսանեայ՝ եւ զմիւսն յանուն դեմե-
տրեայ. եւ եդուն ՚ի քրմապաշտութիւն՝
զազգն իւրեանց։ Եւ դիսանէ, զի գիսա-
ւոր էր. վասն այնորիկ եւ պաշտօնեայքն
նորա գէսս ունէին. զի յորժամ ՚ի քաղ
դարձան՝ չէին կատարեալ ՚ի հաւատս.
եւ զհայրենի օրէնսն չիշխէին յայտնի ու-
նել. այլ խաբէութբ զայս հնարս խնա-
յան. ծամ թողին ՚ի գլուխս մանկանցն.
զի զայն տեսեալ՝ յիշեսցեն զառաջին
պղծութիւն իւրեանց։ Որ եւ ես աղաչեմ,
զգոյշ կացէք. զի մի այս եւ ՚ի ձերում եր-
կիրդ սերմանիցի։

Արդ՝ մեք դարձցուք յառաջին կարգն։
Հիմնարկեալ զեկեղեցին եւ եդ անդ զնշ-
խարան

խաղան, և կանգնեալ զնշան տէրունական
խաչին ՚ի դրուռն եկեղեցւոյն ՚ի տեղի
կռւոյն գիտանեալ: Իսկ եթող անդ պա
շտօնեայս եկեղեցւոյն՝ զմանաւոն և զկրօնաւո
րդէս. և զեպիսկոպան Հայր Հաստատեալ վա
նայն ընդ ձեռամբ իւրով: և եթող ՚ի տե
ղւոջն այս կրօնաւորս քառասուն և ե-
րեք. և ետ նոցա երկոտասան դաստակերտս
զի ծառայեսցեն տեղեացն: Յորոց միոյն
կոչուաս և մեղտի և բրեխ և մուշ և
խորնի և կեղք և բուզու: քանզի ա̃նք
են սոքա քաղումք և մեծամեծք. որք և
կայ իսկ ՚ի գիրս իշխանացն մամկոնէից:
Քանզի կոչուաս ունի երդահամարս
612. և հեծեալս 1030: և տուրք
ծուխս 900: և հետևակս Բ̅Ռ̅. և երկե
րիւր: Մուշ և մեղտի ունի ծուխս Բ̅Ռ̅.
700: և հեծեալս 800: և հետևակս
1030. Խորնի ունի ծուխս 1906 և հե
ծեալս Է̅Ջ̅. և հետևակս Ռ̅Է̅Ջ̅: Իսկ՝ բերեխ
ունի ծուխս 1180: և հեծեալս 800: և
հետևակս 6 հազարս: Իսկ բուզու ունի
ծուխս

Ցուխա հինգ հարիւր։ և հեծեալս 2040
և հետևակս աղեղնաւորս եօթն հա
րիւր քառասուն։ և տիգաւորս վեց հա
րիւր ութսուն։ և պարսաւորս 280։
Արդ՝ այսոքիկ ա՛անագեօղք որ՛եալք
էին ՚ի բնէ ՚ի ծառայութե կռոցն։ զորև
իշխանքն հաստատեցին դարձեալ ՚ի վե
եկեղեցւոյն ամս          և 2 Թր՛ոլ։
Զայս այսպէս պահեալ է որբոյն դրկ
գորէ։

Արդ՝ յետ երկոտասան ա՛ուր՝ երթեալ
իջանէաք ՚ի քաղաքագեօղն մեղտի անդ
երեկօթս արարաք։ Եւ ՚ի մէջ գիշերի
եկն այր մի և պատմեաց Թէ, որք հիւսի
սոյ գան ՚ի վե մեր։ և մեր դէմ եդեալ
կամէաք անցանել յայնկոյս գետոյն յամ
բոյ մի կոչեցեալ Թարձէնք և իշխանքն
անցեալ գնացին մինչ ՚ի ջուռն մուշ քա
ղաքին։ և տեղեկացան դի ոչինչ էր։ և
ապա դարձեալ եկին ընդառաջ մեր և
դարձուցին զմեզ յերեւայ արածանու։
Ամենեքեան յառաջ գնացեալ մինչ

՚ի քաղաքն. և ունիմք ընդ մեզ երթային։
Իբրև հեռացաք ՚ի դետոյն իբր ձիոյ ար-
շա՜ւանօք երկու կամերեք, և մերձե-
ցաք ՚ի վիմօքն ձորակն, և կամեցաք անցա-
նել և գնալ ՚ի տեղի մեհենիցն, քանզի
անդ խակ էր խորհեալ գնել զմնացեալ
ճշխարսն. Ջորիք կառայն ոչ կարացին
անցանել ընդ ձորակն։ Յայնժամ հրեշ-
տակ տն՟ արդել զմէն գրիգոր առեալ
համձեցա՜ւ տր՟ ընակիլ մեզ ՚ի տեղւոջն
յայդմիկ. և վասն պաշտամնելոյ ՚ի հե-
ռաւորոյն տեղւոյ անտի զզօրութիւն ա՟յ կեն-
դանւոյ սքանչելեայն՝ անդէն զձեռն ՚ի
դործարկեալ շինուածոյ եկեղեցւոյ։ Եւ
նոյն օրինակաւ կազմեցաք ՚ի գիշերի ըն-
տեղին ճշխարայն. և եդաք զնոսա ՚ի քարեայ
տապանի իբրև առնաչափ. և զերկուց
վկայիցն մերձ առ դուռն՝ յաջ կողմն ե-
կեղեցւոյն. և զմիւս ակն ըսսայ՝ դնէր
՚ի տապանին, յաղագս մեծի ըսսայոյն զոր
ունէր։ Եւ զորս եդաքն՝ այս են. զաթա-
նագինէին զհայաստանեայն. և զկարապետին
սրբոյ

ոսկերայ զերկուս բարձանս ձախակողմեանն. և զերկուս սրունեան. և մասն ինչ յոսկե-րայ ողինն: Իսկ զայլն ՚ի կեսարիա ա-ռին իւրեանց մասն. զերկուս ոտսն եղա Հեկ բոյթն և զաջ ձեռն մինչև ցարմուկն Արդ՝ ՚ի բերև եղաք ՚ի ներքս ՚ի տապանն իւ-րագոյն ըստ չափոյ նշխարացն որպէս բզ-ինանկնեան տեղեացն. նոյնպէս ծունր կըր-կնեալ սրբոյն գրիգորի մեօք հանդերձ զնոյն աղօթս մատուցանէր առ ած, զի մի ոք յանդրգնեսցէ հանել զնոսա: Իբր նոյնպէս եկն ձայն յերկնից թէ զոր ինչ գրեցերն եղիցի. և ոչ ոք իցէ որ հանի-ցէ զդոսա առ ՚ի գտանել զոր եդեալ եմ և զայս ասացեալ՝ խաղաղացաւ տեղին ՚ի մէնջ և յայտնի եղև փառաւորողացն նշա-նաւ բևեռացն: Արդ՝ որ զկնի այսորիկ է՝ թողաք զայն այլ պատմագրի. մինչև դառնայ դարձեալ պատմութիւնս ՚ի տարբն. զի որպէս զայլ տեղեաց չէ ինչ գրեալ. նոյնպէս և զիմս չիշխէ ոք գրել. զի

Թագաւորաց ժամանակագիրն է:

Այս Պապիէլն, առաջին Պապէքուղին է:

Պապածէն Եւնէրուրսը հայրն Պապուէրաւշին որ յաւէջնա֊
նայ. 13.

Սրբ՝ մինչ դեռ տրդատ և սբն
Գրիգոր կամէին անցանել և գը
նալ առ կոստանդիանոս թա
գաւորն՝ եկեալ հասին
'ի գաւառն ապահունեաց 'ի քաղաքագե
ղըն մանձկերտ: Արքայն հիւսիսոյ զօրս
գումարեալ եկն 'ի վե͞ր աշխարհին վրաց,
և միախառատական արար զիշխան նր͞ և ե֊
րեր մինչև 'ի կարնոյ քաղաքն. և զերկիրն
գերի վարեալ տարան իբրև ոգիս քառա
սուն և ութ հազար: Եւ՛ իբրև եհաս
պատգամաւորն վրաց իշխանին առ
թագաւորն տրդատ և խնդրեաց 'ի նմանէ
զօրս յօգնականութի͞ իւր և եւ թագաւորն
տրդատ՝ 30000. զօրս 'ի ձեռն ապա
հունեաց, և առաքեաց յօգնութի͞ իշխա
նին վրաց: Որք երթեալ յամեցին յամս
օրեայ ճանապարհ. որք և զսակաւ մասն
զերելոյ՝ դարձուցին. և երեք իշխանք ըմ

բռնեցին

բուռնեցին և ածին. և կողմնակալաց Թողէլ
տեղւոյն դարձան ինքեանք առ Թագա
ւորն։ Իսկ ես աղաչեցի զտէրն Գրիգոր
դնալ ՚ի վանս իմ զոր հիմնարկեալ յա-
նուն սրբոյ կարապետին. իսկ և Թագա
ւորն յանձին կալեալ գալ ՚ի տեսութիւն
տեղեացն զոր հիմնարկեալ։ Եւ եկեալ
յաշխարհ տեղեացն գնացաք ՚ի քեառնակող
մին՝ և եկեալ բանակեցաք ՚ի գլուխ առ-
ձանին, վասն ընդարձակութեան վայրացն։
Եւ իբրև եկաք յիմնակնէն տեղին Հան
դերձ Թագաւորաւն, խնդիր արարաք
սրբոյն անօթնի և կրօնիցեալ, իսկ պաշ
տօնեայքն ասեն՝ այս ամ մի է որ ոչ տե-
սանեմք զնոսա. և տրտմեցաւ Թագաւորն
յոյժ. զի ՚ի վաղնջուց ցանկայր տեսանել
զնոսա։ Եւ տէրն Գրիգոր առաքեաց խըն
դրակս զայլբնակոս եղիակոյսն Համ
դերձ երկու սարկաւագօք. տարեալ
նոցա խորանս զայս. ընդ առաւօտն եկա
նեն նոքա առ է յանտառէն ՚ի բլուր ու-
ըերձ. կայենք զուսք անոյ զզոյշ զքումն կձեց-
տեա

տեսեալ փախիցեն։ Որք երթեալ՝ դա-
ձուրս Գ. ոչ կարացին տեսանել. իսկ ՚ի
լուսանալ աւուրն հինգերորդի լուան
զձայն սաղմոսերգութեն նոցա, զի գային
յանտառէն յարեւմտից կողմանէն ՚ի քաղ-
ցրահամ Աղբերէն. եւ եկեալ ելին ՚ի
բլուրն արեւելական տեղւոյն յարարոյն
դեմնաւորեայ.. զոր կոչեմք յարու բլուր.
զի անդ՝ խակ էին զարափուք խորոյնդ։
Իսկ եկեալ ՚ի գլուխ բլրին՝ սկսան սաղ-
մոսել այսպէս. Լսելի արա ինձ տէր յա-
ռաւօտու զողորմութիւնս քո։ Իսկ աղ-
բիանոս ասէ, հոգի քո բարի՝ առաջնո-
որդեսցէ ինձ ՚ի յերկիր ուղիղ։ Իսկ ա-
ղօթեալ անդ անտօն՝ ասէ ց՚աղբիանոս՝
բարի եկիր ճանապարհ խաղաղութե։ Եւ
նա ասէ, բարւո՞ք գտի զձեզ օթեւանք
հոգւոյն սրբոյ եւ ճրագունք լուսոյ։ Եւ
աւետիս ձեզ, զի սբն գրիգոր եւ տրդա-
տիոս՝ ՚ի բնակութիւնս ձեր եկեալ են եւ
յոյժ խնդրեն զձեզ։ Իսկ նոքա ասեն, եւ
ձեզ աւետիս. զի սատանայ կործանե-

ցաւ

ցա՟ն. և ա՟ծ կըրկին ուրախութբ ելից զսա
րարմնս իջմամբ Հոգւոյն սրբոյ։ վասն
որոյ կոչեցան բլուրն այն ա՟ետեայ բը
լուր։ Եւ առաքեաց Աղբիանոս զերկուս
սարկաւագունսն ա՟ետաւորս. զոր լը
՟եալ ուրախ եղաք յոյժ. և առաքեցաք
զնոյն սարկաւագունսն ա՟ետաւորս առ
տըրդատ ՚ի ստորատ արձանին. որ լը՟եալ
լըցան խնդութբ, և եկն ՚ի վանսն Հան-
դերձ գլխաւոր իշխանօքն։ և ՚ի տե-
ղին ուր զա՟ետխան ետուն՝ Հրամայեաց
վէմս ժողովել. զոր կոչեմք ա՟ետեայ
խաղ։ Եւ առաքեաց սրբոյն Գրիգորի
զդասս պաշտօնէիցն և զնշան սուրբ խա
չին՝ Համդերձ քահանայիւք և անուշ
խնկօք. որև ձայն պաշտօնէիցն Հնչեցու
ցանէր զանտառն։ Իբրև մերձեցաք ՚ի
բլուրն՝ նոքա ընդ առաջ եղեն մեզ. և
միաբան ելաք ՚ի բլուրն և աղօթեցաք։
Եւ յետ ողջունին, առէ սուրբն Գրի-
գոր, բար՟օք գտաք զձեզ առաւօտք
խաղաղութե. և նոքա ասեն, բարի եկիր

արդ

առուսեալք արդարութեն, որ զտիեզերս
լուսաւորեն. մշակք առանց ամօթոյ եւ աշ-
խատեալ բարձրագոյն քան զերկինս։ Իբր
համբուրեալ զնոսա յերկար, ապա ելաք
յեկեղեցւոյն. քանզի չէր բոլորն հեռի
՚ի տեղւոյն. այլ տակաւ մի բացեալ ընդ
հիւսիսոյ կողմանէ որ հայի ընդ արեւելս
բարեհամբաւ եւ գիտնոյ։ Իբր երբեւ
տեսաք զնոսա առ թագաւորն, յարուցեալ
համբուրեաց զնոսա եւ նստաւ առաջի
վկայարանին, եւ հայցէր օրհնիլ ՚ի նոցա
նէ. եւ նորա բազում վարդապետութբ խօ
սեցին ընդ նմա, եւ ուսուցանէին զսր
բութեան կրօնին։ Իբր եկաց թագաւորն
՚ի նոյն տեղւոջն առաւուրս հնգետասան.
եւ կանգնեցին վնշան տէրունական խաչին
մեծ. անդ ամ քարակոփին ՚ի տեղի տաճարին
ուր դիտանեան էր. առաջի աղբերն ուր
զբժշկութիւն առնէր հիւանդաց. եւ տօն
ցնծութեն կատարէին բազմամբոխ ժողո
վրդեամբ. Զի կոչեցան ՚ի տեղեաց
տեղեաց. եւ եղեն թրքով իբրեւ հարիւր

հա

հազար չորս հարիւր յիսուն, թող զզօրս թագաւորին և զպաշտօնեայս արքային Գրիգորի՝ զորս թագաւորն հրամայեաց թողուլ և գրել ՚ի բուն խաչին. զի լիցին

յիշատակ ազգաց անցելոց։

Եւ իբրև կատարեցին զնա պաշտամունսն՝ եկեալ հասին զօրքն որք ՚ի վերայ էին՝ առ թագաւորն, և ածին ընդ իւրեանս երեք իշխանս և չորս հարիւր արս ընտիրս. և տեսեալ թագաւորն ուրախ եղև յոյժ և գոհացաւ զնոյ. որ ետ ՚ի ձեռս իւր զթշնամիս իւր. և առեալ զնս առաքեաց յամուրն ուղկան։ Եւ ինքեանք յառաջ եկեալ խաղացին ՚ի քաղաքն աւուրս և դարձեալ մեծաշուք պատուով և քաղաքն ուրախութբ գային հասանէին յեկեղեաց գաւառն։ Եւ յետ երից աւուրց եղեալ անտի գային և հասանէին ՚ի գաւառն պալուննեաց. և եկեալ ՚ի գեօղն կոմատաւ՝ քանզի աշխատեալք էին՝ որ

մի հանգիստ եառուն իւրեանց։

Արդ՝ յորժամ գնացին իշխանքն ՚ի վերայ

և դարձուցին զվերիսն՝ կողմնակալսն Թո-
զլին անդ զիշխանն Աղձնեաց՝ դուժկ-
անուն Նորա. և Նորա կաշառս առեալ ՚ի
Թագաւորէն հիւսիսոյ վաթսուն հազար
դահեկանս՝ գնաց յաշխարհն իւր. և այս
եմ ջան նենգութե՝ վասն Թագաւորին
էր: Եւ՛ այնպէս հմտութ եկն և գիտաց,
մինչ զի զԹագաւորն ՚ի նեղ տեղին Թա-
կարգեաց. բայց առ Թագաւորն տրդատ
30000 այր միայն էր մնացեալ. և
այլն ամենայն գնացեալ էին ՚ի մուշնուաճան
Արդ ՚ի հառաւակիլ գիշերոյն մինչ մեք
զպաշտօն մատուցանէաք առաջի սրբոյ
խաչին զոր կանգնեաց իշխանն սիւնեաց
հրամանաւ սրբոյն գրիգորի. զի մինչ
տրդատ զիննակնեանն կատարեաց՝ իշ-
խանն անդեղտան զխոտենից կանգնեաց.
և սիւնեանց զկոչաւայն կանգնեաց. և
սրբն գրիգոր երթեալ օրհնէր զխաչսն
և յերկոսեանն հիմն եկեղեցւոյ արկա-
նէր: Արդ ՚՚ի նոյն աւուրսն ՚ի պաշտաման
գիշերոյն մինչդեռ զօրհնութիւն երգէ-
մանք

Մանկանցն ատեաց, և թագաւորին ե-
կեալ առ մեզ աղօթեր իշխանօքն համ
դերձ, և չունէաք բնաւ յիրաց կասկած
յանկարծակի ձայն ահեղ իբրև ամպոյ որ
յոյժ դղրդէ, եկն էհաս ՚ի վերայ մեր.
և զառաջին կողմն գեղջն պատեալ էին
հետեւակքն, և զներքինն հեծեալքն. և
սկսան հնչեցուցանել զփողս պատերազ-
մայն. և թնդիւն սաստիկ լինէր շուրջա-
նակի. և անդ էր տեսանել զձիոյն վրն-
ջիւն։ Յայնժամ սկսան և իշխանքն մեր
ընդ առաջ ելանել նոցա ՚ի պատերազմ. զի
բռնաւորն միջօրէյէր բայց ՚ի պատերազմէն
արգել զնոսա թագաւորն, ասելով գիշեր
է այժմ. և մեք ոչ գիտեմք զչափ թշնա-
մեայն։ այլ թէ իմաստութիւն կամիք առ-
նել զգործն, ելէք վեց հազար ընդ մէջ
այգեստանեացդ և թաքերուք ՚ի գլուխ
արձանին մինչև ց՚առաւօտն. և 4000
ընդ հաշտենից կողմն և չորս հազար ընդ
մէջ նոցա գնացեն առ այգեստանեօքն
ընդ վերին դահան, և մեզ ուշ կալցեն.

բայց զձէզ մի իմացին և դարձեալ փա
խոյսեն նենգութե. և 'ի մէջ առեալ վտան
գեսչիք զնոսա. և բաժանեալ զ զօրսն
յարձակեալ ուղ խորհեցաւ. Բայց Թա
գաւորն և սէն գրիգոր 'ի փոքր ամրոց
անդ. մտեալ մեօք հանդերձ աղօթէին։
Իբր մի ոմն 'ի սիւնեաց զօրացն ըմբռնել
պատանի մի 'ի հիւսիսական զօրացն՝ էած
առ Թագաւորն. և իբրև տեղեկացաւ
'ի նմանէ իրացն Թէ 'ի քոց զօրացդ. և իշ
խանացդ են իբրքն, և Թագաւորն է դե-
դուեհօն, և վասն ունելոյ զքեզէ եկել
յիսուն և ութ հազարաւ հրամայեաց յայն
ժամ զօրացն պատրաստել զինքեանս յետին
աւուրն և մահու. եւ իբրև առաւօտ ե-
ղև՝ ասացաւ Զօրս կազմել յամրոցս Թա
գաւորին 'ի վերայ արձանին։ Իբր Թագա
ւորն հիւսիսոյ հրամայեաց զօրաց իւրոց
ունել փախուստն վեց հազար սպառազի
նօք. զի կամէր արգելուլ զԹագաւորն.
զոր յառաջ եկեալ արգելուին 'ի գլուխ
արձանին. որ զբաղում ժամս ոչ կարաց
եղա

Ելանել ՚ի վեր։ Զոր տեսեալ սրբոյն Գրիգորի և յարտասուս հարեալ ձայն երբարձ և ասէ, մկրտիչ յօհաննէս կարապետ քո՝ չտեսանե՞ս զինչ գործեն. արք հաւ յօգնութի՛, և արա զզօրս զայս նշանաւորս յազգս։ և առեալ զնշխարս առաքելոյն տնապրէր ՚ի վերայ նոցա։ Յայն ժամ՚ուժ առեալ տրդատայ քաջառնաբար ձայն տուեալ յօգնութիւն կոչէր զն̃է կարապետն. և կոտրեալ զուազմ առաջապահոյն էանց ՚ի գլուխ բլրին. և որք ՚ի գիշերին թագուցեալ էին զօրքն յարուցեալ ՚ի մէջ առին զայն զօրսն. և կոտորեալ փախըստականս արարին զնոսա և զորս փախուցին՝ իջուցէ՛լ ՚ի հարաւոյ կողմն անտառին ո՛չ ՚ի թակարդ արգելլով կոտորեցին զնոսա անխնայ. և անուանեցաւ տեղին՝ թակարդ։ Իսկ զօրքն հիւսիսոյ որպէս դիպօղ ժամանակ գտեալ յարձակեցան ՚ի վերայ գեղջն. և դեհանէին զմեզ յամրոյն. զոր տեսեալ չորս հազարայն որ ՚ի վե՛ր գեղջն էին, յա

րու

բուսեալ վաճառականս արարին զնա ՚ի ներ-
քոյ գեղջն՝ զոր ոմանք յագուրդայն գլա-
ջարդս արարին զՃահաւոս երկվարայն. և
բազումք ՚ի հեծելոյն ձեռաւն ՚ի վիմայն։
Իսկ զօրքն մեր կրեալ զնոսա ընդ այ-
գեմէջան, յաւելաւք պըրծեցան ՚ի նոցանէ.
և անկան ՚ի տեղւոջն վեց հարիւր այր։
Իսկ ՚ի Թանկորդան 1700 այր. և զոր
պարսաւորքն կոտորեցին, ութն հարիւր
վեց։ և ընդ ամենայն, երեք հազար հա-
րիւր վեց այր։ Եւ այս դարձեալ Թա-
գաւորն ՚ի խոքը կոտորածէն՝ եւ ՚ի գը-
լուխ արձանին. և հարեալ զպարտարար փող-
արն մնայ անդ մինչև ցամ զօրքն ՚ի մի վայր
ժողովեցան։ Եւ իբրև եկին հասին ՚ի
տեղին, զորն գրիգոր իջուցին յանտա-
ռէն և պահեցին զնա առք 4000։ Իսկ
Թագաւորն հիւսիսոյ առեալ զզօրս իւր
գնայ ՚ի հաշտենից տանին, և առաքեաց
Թուղթս առ Տրդատ, եթէ ՚ի վաղիւն
եկ և տացուք պատերազմ. և եղիցի օր յա-
ռերեսնական ՚ի մէջի մերում. զի կամ տա-
ցեա

ցես զիշխանս իմ յիս, և զհարկսն հրն̃
զետասան տարւոյ. ապա թէ ոչ՝ քանդեմ
զերկիրդ քո սրով և գերութ̃բ. ոպ̃ զի
ծանիցես զխոզութի̃ քո զոր արարեր ա-
ռաջի զօրայ քոյ: ա՛րդ արա այդմ պատաս-
խանի: Եբ̃ ընթերցեալ զթուղթն՝ ոչ ա-
րար նմա պատասխանի. այլ յարուցեալ
գնայ երեսուն հազար արամբք՝ ի պատե-
րազմ: և երթեալ յանդիմանանոյա իշա-
նէր 'ի մուշեղայ գեօղն հաշտենից: Եբ̃
'ի վաղիւն ըսկըսան ռա՛զմ կազմել և հրն̃
չեցուցանել զփող պատերազմին. և զօրա-
նայահս ահեղեայն զբագրատունեայ իշ-
խանն կայուցանէր: իսկ զաջ զօրուն
թեւն տայր 'ի ձեռն իշխանին սիւնեայ.
և զահեակն 'ի ձեռն իշխանին անձեւ-
տան: իսկ զգահերէց իշխանն կայուցա-
նէր թիկնապահ իւր՝ և այնպէս յօրինե-
ցան 'ի պատերազմ: Եբ̃ իբրև տեմ̃ զօրքն
ոսկան ընդդեմ իրերայ անցանել՝ ձայն բար-
ձեալ արքայն հիւսիսայ ասէր, արքայ հայ-
ոց յառաջ մատիր: և իբրև եկին ընդդեմ
իրերաց

իւերայ՝ սկսան իբրեւ զմըրճաւորս քարա-
հատաց՝ կամ իբրեւ զուռնաւորս՝ մինն
առնոյր եւ միւսն իջուցանէր։ քանզի եւ
արքայն հիւսիսոյ զօրաւոր էր իբրեւ ըզ-
տրդատ եւ ահաւոր։ Բայց ՚ի բազում կո-
չելն միմեանց։ արքայն հիւսիսոյ սկսաւ
պակասիլ. եւ գիտացեալ եթէ մեռանելոց
է քանզի խոցանաւոր էր, աճապարեալ
ճգնեաց զխոցանն եւ էարկ ընդ աջթիկն
եւ պարանոյն տրդատայ. եւ այնչափ փու-
թանակի դարձաւ ՚ի կըրթել զխոցանն,
մինչ զի ոչ կարաց տրդատ շարժել զձե-
ռըն իւր։ Յայնժամ ուժ առեալ տրդա-
տայ՝ մերկացեալ զերկսայրն իւր ըզկնի
զեթուեհանի այնչափ փութայէս, մինչ
ոչ տալ քայլս տասն ոտից նր̃. եւ իբրեւ
էհաս նմա, աստ՝ կատաղի շուն՝ խածնե-
ցէր զկնի քոյ ջլայդ. եւ անդէն բարձեալ
զաջ ձեռն ՚ի վեր՝ իջուցանէր զսուրն ՚ի
վերայ ձախոյ թիկանն նր̃ եւ անցուցանէր
ընդ գօտին. եւ զայն երկխարին հանդերձ
գլխովն երկոսեան կործեալ յերկիր ընկեց

էր

Եւ՞ այն էր զարմանալին, որ գլուխն և աջ ձեռն և աջ ոտն գեթուեհոնի, և երիվարէին որն ընդ մէջ հերձեալ էր մի-մեանս թուալէին։ Զոր իբրև ետես իշ-խանն անգեղատան ի վէր ածեալ զահեակ թեւն՝ ձայնէ բարձ առ իշխանն սիւնեց ՚ի մէջ ածել զգունդս այծուց․ զի անկա՟-քօշն։ Եւ՞ նա ՚ի մէջ ածեալ է հատ զզօր-ըն. և անցեալ յաջ թեւացեան հիւսիսոյ ասէ, սատեղահաչ՝ յառաջ մատիր և մար-տիցուք։ յայնժամ աճապարեալ հիւսի-սայինն կտրեաց զգլուխ երիվարին սիւ-նեաց իշխանին։ Իսկ նա վտանգեալ էած զսուրն փութապս և կտրեաց զոտս երի-վարին հիւսիսոյ իշխանին. և երկոքեան յերկիր անկեալ բուռն զմիմեանց հարին Յայնժամ ոմն ՚ի ծառայից սիւնեաց իշխա-նին մղեաց զոմն և ընկէց յերիվարէն իւր-մէ. և ածեալ զերիվարն սիւնեաց իշխա-նին ասէ՝ հեծիր տէր. և նա աճապարեալ երիվարաւն կտրեաց զգլուխ հիւսիսոյ իշխանին և ընկեց ՚ի մախաղ իւր։ Եւ՞

իբր

իբրև ետես ։ իշխանն անգեղտան զիջան՝
և զզօրսն թէ 'ի փախուստ դարձան, այլա
զձեռն 'ի գործ արկեալ բախեցին զպա-
տերազմն առ իւրեարս. ուր և թագաւորն՝
զհետ մտեալ մինչև 'ի մուտս արեգական
կոտորեցին զնոսա անխնայ. և ո՛չ ոք
դիմադարձ դառնալ նոցա ։ և 'ի նորին տե-
ղիս դիմեալ օթևանս առնէին առ եզեր
գետոյն, որ անցանէր ընդ մէջ գա-
ւառին Հաշտենից. և բանակեցան անդ յայ
նում կողմանն 'ի նոյն գիշերին ։

Եւ՛ իբրև առաւօտ եղև՝ պատրաստե-
ցան միաբանեալ զօրքն հիւսիսականաց, և
յարձակեցան 'ի վերայ զօրացն Հայոց. և
սկսան կոտորել զնոսա ։ և այնչափ յան-
դգնեալ՝ մինչ զ'իշխանն Ծոփաց 'ի մէջ ա-
ռեալ պատեցին բազումք. որ աղաղա
կեալ ասէր, ո՞ւր ես իշխանդ Սիւնեաց
հաս ինձ յօգնութիւն ։ Եւ՛ նորա հասեալ
իբրև զսրաթռուիչ արծիւ՝ հալածեաց ըզ
զօրսն 'ի նմանէ ։ և տեսին զի խոցեալ
էին չարաչար է՟ երեսօք նորա՝ առեալ

տարան

տարան 'ի բանակն և անդ մեռաւ։ Իսկ ընդդէմ դարձեալ Տրդատայ՝ սպարապետն Գեղուեհամն բազում մեքենայիւք խուռնք. և կարծէր լուցեալ զահեակ թեւն նորա։ և նորա բարկացեալ և մըրմռեալ իբրև զառիւծ՝ յարձակեցաւ 'ի վերայ նր, և հարեալ 'ի վերայ գագաթանն ձեղքեաց ընդ երկուս. և անկեալ զինի զօրացն փախստականս արար զնոսա մինչև 'ի հարք. և այլք ոմանք հետամուտ եղեն նոցա մինչ 'ի կարնոյ քաղաքն։ Եւ իբրև դարձաւ Թագաւորն և իշխանն յարձանին՝ և իջին առ ափն գրիգոր 'ի տեղին ուր սբ կարապետն էր, մեծ գոհութե մատուցին այ. և առնէին պատարագս ողջակիզաց սպիտակ զուարակաց և նոխազաց, և բազում զառանց։ և տային ողորմութիւնս աղքատաց բազմաց։ Եւ իբրև եկեալ ժողովեցան զօրքն ամենայն՝ համար արարեալ՝ գտան պակասեալ 'ի մերոց զօրացս հազար և ութսուն. իսկ 'ի նոցանէ, տասն և հինգ հազար իննհարիւր

ըիւր քառասուն երկու։ Նոյա փախստա-
կան եղեալ մինչև ՚ի Հարք. և իշխանն
Հարքայ անկեալ ՚ի վերայ ՚ի վեց տեղիս
կոտորեաց ութ հարիւր յիսուն և վեց
այր և ինքն մտեալ ՚ի բազում տեղիս
կոտորեցին զնոսա. և որք գնային ՚ի գա-
ւառն Լուբեանց՝ էին վեց հազար. իսկ
մինչ ՚ի տարօն մտին էին 8000. և 50։
Այս. ամ գործեցաւ ՚ի գաղթն Նոյա ՚ի Հռօ-
մայ. բայց եղև ՚ի ձեռն նենգաւոր իշ-
խանայն աղձնեաց։ Որք իբրև կային ա-
ւուրս երիս ՚ի տեղիս ինձակնեան, ապա
խաղային միաբան և գնային ՚ի գաւառն
ապահունեաց, տանելով ընդ ինքեանս
զիշխանն որ ՚ի բերդին ուղկան. և չորս
հարիւր այր ՚ի գիւղն արքունի տայր ար
կանել։ Եւ իբրև հասանէ զօրայն որ յա
ռաջէին ուղարկեալ՝ հրամայեաց Նոյա
ունել զիշխանն աղձնեաց և ծայրաքաղա-
նել. զոր արգել սրբն Գրիգոր ՚ի պատու
հասիլն. բայց ՚ի պատճոյն հերքեալ մեր
ժեաց և վարեաց ՚ի գաւառէն հայոց։

Եւ

Ե՞ս զկնի այսորիկ եթէ խնամել ոք կամի-
ցի՝ գալ պատմագիրս Հարցյն: Արդ՝ այ
տաքիկ ՚ի մէնջ պատասխանի և ձեզ բա
ճական լիցի: Բայց եթէ դուք գալ կա
միք՝ երկիրս բարի, վայրքս և օդս անուշ
և ջուր բազում: Երկիր դաշտ և շուր
ջանակի լերամբք պարապեալ ՚ի բազում
ամրոցօք· երկիր խոտաբուղխ և մեղրա
բուղխ: և ոչ մանաւանդ որ յերկնից իջա
նէր, նոյնպէս և աստ իջանէ ինքն անտառա
ցին, զոր դադպին կոչեմք. Ե՞ւ զի ձեր-
երկիրդ խորշակահար է և հողապակաս:
Իսկ մերս ամենայն բարութեամբ լցեալ. իշ-
խանքն կրօնաւորաւորք աղքատաւորք,
որբոց խնամածուք և սուրբք ՚ի չարեաց
Արդ՝ աղօթիւք ձերովք պահեսցէ տէր
զհօտս մեր և զձերդ ՚ի խաղաղութեան.
շնորհիւն ամ. ողջ լերուք ՚ի տէր. ամէն:

Ասա՛ ինձ ոյք էին որք յաջորդեցին զառաջնորդու-
թիւն սրբոյ հայրապետութեանն, որ կոչի Գլակայ վանքն :

14 :

Զենոբ. և կայ հայր վանացն Գլա-
կայ ամս 20 : Յետ նորա աշա-
կերտն Անտոնի ամս 30 'ի սր̃
տասն ամին եկն սբ̃ն Գրիգոր 'ի վանս Գլա-
կայ, և եկաց յա՛ետեայ ըղուրբն առ Ան-
տօն և Կրօնիդէս 4 ամիս : և գնայեալ
Անտոնի 'ի մանեա՛յ այրն՝ և կայեալ անդ ամս
7 . վախճանի 'ի կենայ 'ի փառս ա̃յ : Ստե-
փաննոս աշակերտ նորա ամս 15 : սա՛ շի-
նեաց եկեղեցի յանկոյս կոճառայ առ
յորդաբուղխ աղբերն, յորում առուրբն
Գրիգոր զնշխարսն պահեաց : և կայոյց
անդ կրօնաւորս վանացն : Եփրեմ ամս
28 Յօհաննէս ամս : 10 : Մարկոս ամս
18 : Կիւրեղ ամս քսան երկու : Գրիգոր
ամս վեց Անդրէաս ամս 11 : Ներսէս
ամս 7 : Յօհաննէս ամս 3 : Սա՛հակ ամս
5 : Բարդուղիմէոս ամս 4 : Աթանաս ամս
10, սա՛ էր 'ի ժամանակս մովսէսի հայոց

կաթո

կաթողիկոսի, յորում Թվականն եղաւ ե
սաէր տեղեակ տումարի ամենայն ազգաց
Կամիտաս ամս ութն։ Ստեփաննոս ամս
վեց։ Բարդողիմէոս ամս ութն։ Թա
թէոս ամս երեսուն։ սա ստացաւ զպա
քինութի. և եղև սիրելի մուշեղայ իշխա
նին մամիկոնէից վասն սրբութե խորոյ։ սա
բազում կրօնաւորս կարգեաց 'ի վանս
գլակայ. և եղեն առ սոքաւ արք երեք
հարիւր ութսուն և ութն։ 'Ի սորա ժա
մանակս եկին չորս մարդ 'ի յունաց սեք
և Ջգնաւորք, և բնակեցան յանապատ անդ
ամս քսան։ Եկին և այլ սուրբք, և բնա
կեցան ոմանք 'ի նոցանէ յիննակնեան վան
սըն. և այլքն 'ի քար այրն որ 'ի հարաւոյ
կողմն է, 'ի Թագուցած խաչին կողմանն։
Արդ 'ի ժամանակսի իշխանութեանն մու
շեղայ մամիկոնէից տանն, և 'ի հայրա
պետութեանն Թոթկայ՝ հրաշալի իմն
գործ գործեցաւ 'ի վանս գլակայ 'ի դու
ռըն սրբոյ կարապետին իշխանն արծրու
նեաց որում կոչէին վարդպատրիկ՝ չինեաց
բաղում,

քաղում եկեղեցիս և վանորայս. և ունէր
կին մի բարեպաշտօն մարիամ անուն. ե-
ղևնմա գնայ 'ի կեսարիա, ետ ու զկին իւր
և եած առ հայր նորա, և ինքն գնաց։
Եւ կինն քանզի յոյժ փափագէր տեսու-
թե սրբոյն որ էին 'ի վանս սրբոյ կարա-
պետին, առեալ յաւուր միում զմանու-
կըն փոքրիկ 'ի ստեան՝ որ էր անդրանիկ
իւր՝ քաղում յօժարութ գայր 'ի դուռն
սբ կարապետին. և աղաչէր յոյժ զկրօնա-
ւորսն մտանել յեկեղեցին. իսկ սպասա-
ւորքն արգելուին զնա յայնմ խորհրդոյն
քայց զմանուկն առեալ 'ի գրկայ տիկնոջն
տարան յեկեղեցին առաջի սրբոյ սեղա-
նոյն, երկրպագեցուցին առաջի ածն և
բերեալ ետուն զնա. իսկ նորա առեալ
զմանուկն սկսաւ արտասուել լալ և ասել՝
վայ ինձ մեղաւորիս որ զրկեալ եմ 'ի բա-
րեաց. ողորմեցէք զիս ամենայն կանայք.
ահեղի տուք ամ արտասուաց իմոյ ամենայն
ձայնարկուք։ ծածկեսցեն զիս լերինք և
ողորմեսցին ինձ բլուրք։ գազանք եղկե-
ցեն

ցեն զիս, և թռչունք խնթացեն ընդ
մեզ. Հրեշտակք աղաչաւէին զանձն իմ
և դևք յարձակեցան ՚ի վերայ իմ: Որոց մե
ծարուք ինձ սպասաւորք սոյ կարապե
տին. և տուք տանել զիս ՚ի տաճար անդր
Եւ յմանուկն ասէր, որդեակ՝ ընդէ՞ր
բաժանեցար ՚ի գրկաց իմոց՝ զիա՞րդ ոչ
ողորմեցար մօր քոյ. ո՞չ ես ծնայ և սնու
ցի զքեզ. և զիս միայն թողեր: Եւ զայս
ասացեալ կնոջն՝ հանեալ բազում անու
շահոտ խունկս տայր սպասաւորացն և
ասէր, առէք զայս և տուք տանել զիս
ի ներքս: Եւ պատգամաւորք ուղարկեր ցտէն
Թովթիկ զի առցէ զիրսն և թողցէ զնա ՚ի
ներքս. և նա ասէր՝ ոչ առեալ եմ զայդ
հրամանս յառաջնոյն, և ոչ մեք իշխեմք
առնել: այդ՝ եթէ վասն հաստոյ ես՝
ընդունելի է այդ չափ աշխատութեանդ.
և մի վասն պատասխանւոյս ձանձրանար
՚ի մէնջ. այլ երթ խաղաղութեամբ: Եւ նա
ասէ, ոչ այդպէս. այլ եթէ վասն իշխա
նութեան՝ ես չերկնչիմ ՚ի ձէնջ. իսկ թէ
վասն

վասն թշնամութեն քոյ կալապետին է ընդ
մեզ, ո՞չ ապաքէն և նա ՚ի կնոջէ է ծնեալ
Եւ դարձուցեալ զբան իւր՝ ասէ, արդ՝
ես մտանեմ ով տէր, և զքո մայրդ ինձ բա
րեխօս ունիմ. մի առներ յիս զպատուհաս
բարկութեան քոյ. և մի եղեց նշաւակ
երկրի։ զի թէ և դու զկնոջ կաթն ար
բեր, դոնեայ և զիս տաճարիս արժանա
ցո. և զայս ասացեալ եմուտ ՚ի ներքս՝ համ
բուրելով զորմն տաճարին։ Եւ գնա
ցեալ առաջի սրբոյ սեղանոյն ծունր կրկի
նեաց և ասէ, տէր տէր զբեկեալս սըր-
տիւ, և ողորմութի արա ինձ վերաս
րելոյս. զի դու ողորմած ես ո՛չ յիշես
զբարկութի քո. արդ՝ օրհնեալ լիցի ա-
նուն քո յաւիտենի։ Եւ իբրև ել արտաքս
խստացան, ոխացան և տրտմեցան ընդ իւրեան
սպասաւորք եկեղեցւոյն. և ո՛չ պատրաս
տեցին կնոջն կերակուր։ Իսկ նա հրա-
մայեաց իւրոյ սպասաւորայն պատրաս
տել ճաշ կրօնաւորայն. որք եկին ՚ի սե
ղան տիկնոջն. և էին արք երեք հարիւր
իսն

իննաւուն. Եւ յորժամ ճաշէին՝ ասէ
տիկինն, ով սրբասէրք և փոյթք յածային
պատուիրանաց, ուրախ լերուք ընդ իս այ-
սօր ՚ի տէր. զի ներեաց ինձ և կատարեաց
զփափագումն սրտի իմոյ: արդ՝ օրհնե-
ցէք զիս և արձակեցէք: Իսկ եկեղեցա-
պանն և մի ոմն ՚ի կրօնաւորացն յարու-
ցեալ ՚ի դուռն եկեղեցւոյն գնացին ՚ի
սուրբ կայարանն՝ և ծունր կրկնեալ
անդ ասեն, ով տէր դու ներեա կնոջն որ
զայն գործեաց, և այլ կանանց համարձա-
կեալ մոյծ. արդ՝ արա զնշան զօրութեան
քոյ ՚ի նմա. զի վկայ լիցի ազգաց և օրէն
բազմաց: Եւ իբրև ուղարկեցին զկինն
և խնջեանք դարձան, և մերձեցան կինն
ելանել զառիվեր լերինն որ ՚ի գլուխ սա-
դակայ է և ՚ի փոքր ամրոյն հայի. ետես
կինն ՚ի հիւսիսական կողմանէ տեսութիւն
զարմանալի. ընկէց զմանուկն ՚ի դայեակն
և ասէ, տեսանեմ այր մի գեղաւոր ընդ-
ամպս որոտացեալ և ելեալ յեկեղեցւոյն
գայ առ իս. տեսանեմ առ նա սուրբ սրբել

և

և թաքուցեալ և յարեան ներկեալ։ Եւ ընդ բանան է հար զնա, և սատակեցաւ անդէն. զոր տեսին սպասաւորք եկեղեցւոյն. Իսկ հայրն եբեր յոյժ բարկացաւ եկեղեցպանին, և որոտմեալ արտաքեաց բազում ժամանակս։ Եւ ապա առեալ զնա սպասաւորայն պատրաստեցին նմա գերեզման և եդին 'ի նոյն տեղւոջն և կանգնեալ 'ի տեղւոջն խաչ քարեղէն գրեցին 'ի նմա այսպէս. որ յանդգնիցի մարտնչիլ ընդ եկեղեցւոյ այ՝ այս սուր եղիցի 'ի վզ̃ նորա. և հաստատեալ կայ այս գրով 'ի նոյն տեղւոջն։

Իսկ զմանուկն առեալ ետ 'ի դայեակն մինչև յարբունս է. հաս. և ապա ուսուցեալ արար զնա հայր վանայն յառաջ քան զմահ իւր։ Իսկ հայր նորա իշխանն Արծրունեաց եկեալ 'ի Կեսարիա լուաւ զմահ տիկնոջն և սորջացաւ։ Իսկ հայրն մխիթարեաց զնա։ Եւ խորհեցաւ շինել եկեղեցի՝ բայց գնայ 'ի մանրավանսն վրց̃ ցնխութ գտանելոյ. և շինեաց անդ վայե

լուչ

ըուց եկեղեցյ և կոչեաց զանուանն նմա-
ծին, վն՟ կնոջ իւրոյ. և զարդարեաց զնա
հրաշալի ապասիւք։ Նոյնպ՟ և զնբ՟ կարա
պետն զգլխկայ վանան զարդարեաց։

Սա դարձոյց ՚ի սբ՟ կարապետ զկ՟առս
և զպարեխ. քան զի իշխան ոմ՟ն անօրէն
կտրեաց զերկոսեանն և եա դուսանի
միոյ. և կիւրեղ հայր վանացն անէծ զնա.
և յետ սակաւուց յորս ելեալ իշխանն ան
կաւ յերիվարէն և էհ հան զոգին. բայց
որդին թէպետ և դարձոյց զառանսն՝
այլ նորքա ոչ առին մինչև ցիշխանս այս։
Արդ այս իշխան կշուեաց 22 հազար
դահեկան. և տրեալ տարօնոյ իշխա-
նին գնեաց ՚ի նմանէ զերկոսին առանսն։
և եա վանից սրբոյ կարապետին վկձուով
Սա եա և երկու առանս յիւր իշխանու-
թենէն սրբոյ կարապետին, զարտամեա
և կգոմս։

Ընդ նոյն ժամանակս ապանին զորմիզդ
զպարսից արքայն. և ջամբ խոսրով որդի
նորա եկն փախստական ՚ի հռօմաս մօ-
րիկ

ընկ՚արքայն· և կնքեալ քաղդեական հա-
ւատով՝ դարձաւ զօրօք ՚ի պարսից գործ-
աւորան, և առնու զերկիրն։

Արդ՝ մինչ ՚ի յունաց գայր խաւարով՝ ա-
ռեալ զմուշեղ զորդին մշու, և զխութա
զտարօնու իշխանն և զսամսոյ, տարաւ
՚ի դ.վին և հայոց մարզպան հաստատեալ
և տուեալ ՚ի ձեռս ն.ժ զզօրս հայոց
երեսուն հազար, ինքն առեալ զզօրսն
յունաց 70000 գնայ ՚ի քաղխասատան·
և ընդ հայոց հազարաւորացն բնակիլ· այլ
գնային անդրէն յաւուր միոյ ճանապարհ ՚ի
դաստակերտն և անդ իջին։

Իսկ նիհորաճէն նորմիզդ գումարեալ
զզօրս պարսից ութսուն հազար՝ եկն ՚ի
վերայ մուշեղայ· և նորա քաջալերեալ
զզօրս հայոց՝ հանդէպ հաւանեցոյց մտա-
նել ՚ի պատերազմ։ Եւ բանս ՚ի բերան
զօրացն կոչել յօգնութիւն զքս կարա-
պետն· և միաբան զայս բան ասացեալ յար-
ձակեցան ՚ի վր զօրսն պարսից· և ետ
տր զթշնամիս ՚ի ձեռս նց։ Եւ գիտա-

ցեալ

ցնէ մուշեղայ թէ թագաւորն է՝ մատնէ՞ նմա. և սկսան բախել իրերաց. յոր յոյժ վաստակեցաւ մուշեղ. և 'ի վերկալեալ զմուրճն իջուցանէր 'ի վերայ գագաթանն. որոյ ցնդեալ ուղեղն իջանէր ընդ քիթն. և կտրեալ զգլուխ նորա եդ 'ի մախաղ իւր։ Եւ յորդորեալ զզօրսն 'ի պատերազմ, զօրացեալ եդ զնոսա 'ի փախուստ. և կալան քառասուն և ութ իշխանս կենդանի. և համար կոտորածոյն ոչ երևեցաւ վասն բազմութեանն. և ըմբռնեալ յիշխանացն 1000 այր՝ դարձան 'ի կոտորածէն մեծաւ յաղթութեամբ։ Եւ իբրև ազդ եղև առ խոսրով թագաւորն պարսից՝ խնդայր յոյժ. իսկ զօրքն յունաց տրտմեցան սաստիկ յամօթով։

Արդ՝ իբրև կոչեաց թագաւորն զմուշեղ և պատրաստեաց պարգևս տալ ամենայն զօրացն, յղեաց առ խոսրով մօրիկ արքայն յունաց, (քանզի թագաւորին փոխան կարգեալ էր զնա.) եթէ՝ գիտե՞ս դու զայդ, որ արքայից սպանմանն սպառնայ

ունայ մուշեղ։ Եւ՛ նա խորհեցա՛ւ գոր-
ծել նմա դարան մահու. և առաքեալ
կոչեաց զմուշեղ առ ինքն. և իմացեալ
քոյրն խոսրովու՝ ազդ առնէր նմա զնեն-
գութի՛ եղբօրն իւրոյ։ Եւ՛ մուշեղ ա-
ռեալ ընդ իւր քառասուն այր միայն ա-
ռանց ուրուք, և կազմեաց զնոսա զօրէն
պատերազմի. և սուսեր ընդ մէջ ածեալ
այնպէս եկին առ թագաւորն երկվարօք
մինչ՝ ի դուռն խորանին. և ա՛մ խստու-
տուեալ պատասխանի, և՝ ի լոյս ածեալ
զդարանն մահու՝ թքակոծեաց զանմտու-
թի՛ նորա. և յարուցեալ մեծա՛ բարկու-
թե՛ ել՝ ի թագաւո՛րէն։ և իբրև լուա՛
թագաւո՛րն՝ երկեաւ՛ ՝ի նմանէ. զի մանու-
կէր։ Եւ՛ իշխանն մուշեղ առաքէ՛ց առ
յունաց զօրապետն և ասէ, կամեցայք
դուք նենգութե՛ սպանանե՛լ զիս. արդ մի
զարթուցանէք զառիւծն ՝ի քնոյ, և մի
զգայլ՝ որ զբարս իւր մոռացեալ է։ ապա
թէ ոչ՝ որ զութսուն հազարն յաղթահա-
րեաց, կարօղէ և զեօթանասուն հազարն

յաղ

յաղթահարել։ և ինքն թողեալ զզօրսն ՚ի դվին՝ ՚ի բաց եկաց ՚ի մարզպանութենէն. և առեալ զզօրս իւր որ ՚ի մամիկոնեան տանէն՝ եկն ՚ի գառնաւ իւր։ Եւ յետ սակա ա̃ուց եսպան փոկաս զմօրիկ, և ինքն նստաւ յաթոռ նորա. զոր լուեալ խոսրովու գնաց վրէժխնդիր լինել մօրկայ. և եկեալ անցանէր ընդ կարնոյ քաղաքն։ և առաքեաց առ մուշեղ իշխանն տարօնոյ թէ արի եկ ընդ իս ՚ի դուռն թագաւորին յունաց. ապա թէ ոչ՝ յորժամ դառնամ ապականեմ զերկիրդ քո՝ և զքեզ և զընտանիս քո տանիմ կապանօք ՚ի դուռն արքունի։ իսկ նա ոչինչ տուեալ պատասխանի՝ սկսաւ զերկիրն ամրացուցանել։ Եւ իբրև գնաց խոսրով և էառ աւար և գերութի̃ յերկրէն յունաց՝ անցեալ գնաց ընդ կողմանս բասենոյ։ Բայց յորժամ եկն խոսրով ՚ի քաղաքն կարնոյ՝ զմիհրան ուղարկեաց զօրօք ՚ի տարօն, զի կալցէ զտէր նորա և տարցէ ՚ի բալխ. և զտեղիսն զօրանա հաստատ ունէր՝ կործանել հրամայեաց

տալ. և զԿրօնաւորսն սպանանել, որք եկին և արարին զիրսն։

Գլուխ ութսուներորդ պատմութեան. և զան Բերտանայ ՚ի պատերազմ երեսուն հազարաց, և [illegible] Գայլան վաճառեալ յօձ փաղաց։ 15։

Յառաջին ամի թագաւորութեան Փոկասու՝ մեռաւ Մօրիկ կայսրն ՚ի ծառայէն իւրմէ. որև նստաւ յաթոռ նորա յիշխել խստագոյն զրուխ-տըն [illegible]ր և եկն է առաւար և գերութի. և բերեալ քաղաքաց աւանս և քաղաքս, և եղեալ գնայ։ Իսկ զմնացորդս քրիստոնէից իւր՝ առաքեալ ՚ի տարածոյ 30000. և իբրև եկն ՚ի գաւառն Հաշտենից՝ կալեալ զոմն իւրեանց առաջնորդ՝ եկին մինչև յարձանն. Եւ իբրև ընթերցան զգիր արձանին՝ խոստովանեցին զարձանն քարեալ՝ և ինքեանք ուխտ հաստատ այր դնացին ՚ի ժողովս և յաստեղծն ամպոյն. Իսկ 22000

22000 դեռ արձան անդր կային զերտե-
լով զփախուցեալսն։ Եւ՛ իբրև գիտացին
եօթն արքն որքեին խոստաձարակք՝ ի
վանսն, զամենայն կրօնաւորսն փախուցին.
կորոյ ոմանք փախեան և ոմանք մնացին։
Բայց պօղոկարդոս ուղարկեաց զամենեսեան
յամուրն ողկան. և ՚ի տեղւոջն զհայրն
Թոթիկ և զլուսաւորն եկեղեցւոյն
միայն արգել. և հրամայեաց ոսկաւորա-
ցւն պատրաստել զանձինս տէրունական
մարմնոյն։ Եւ՛ իբրև մատուցին պատա-
րագն եօթնեքին խոստաձարակքն՝ հրա-
մայեցին նշանագրի միում որ եկեալէր ՚ի
յունաց՝ գրել զա ՚ի յինքեանց աստ-
ցեալսն։ և ինքեանք տարածեալ զձեռս
խաչեանց առաջի ուխտոյ սեղանոյն սկսան
ասել այսպէս.

Տած զօրութեանց և արարիչ ամ-
ենայնութեանց, որ ստեղծեր
զմարդն ՚ի պատկեր քոյոյ բա-
րերարութեանց, և կացուցեր զնա իշխան

՚ի

'ի վեր երկրէ. և ետուր նմա զփառս և
զպատիւ յաւիտենական անմահ, ուստի
նախանձու բանսարկուին մտին մեղք
յաշխ, և 'ի մեղաց մահուծումն, և 'ի մահուայ
մանէն կորուստ յաւիտենական: ուստի
զորդեգրութիւն որ յոյ էր ջնջեալք
պատրանօք մեղացն. ուստի փրկութե
ճանապարհն բարձեալ էր և մահ թագա-
ւորեալ: Այլ դու տր գթացար 'ի ստեղ-
ծածս քոյ ածային ձեռաց, և առա-
քեցեր զմիածին որդին 'ի փրկութի ա-
շխարհի. որ եկն և ծնաւ 'ի սբ կուսէն
'ի մեր նմանութիս: Արդ՝ յիշեա զգինս ա-
րեան քոյ. և փրկեա 'ի ձեռաց նեղչաց
րդ հաւատացելոց անուան քում. ձգեա
զամրածածուկ աջ քո 'ի վեր բանաւոր փա-
րախիս այսորիկ. և մի տար զժառանգու-
թի քո 'ի բնակութի անհաւատից: Տուր
տր անձանց մերոց մասն ժառանգութե
'ի վերինն երուսաղէմ. զի վս քոյ մեռա-
նիմք զօր հանապազ: Լո՛ւր տր ձայնի ա-
ղօթից մերոց, և խոնարհեցո՛ զունկն քո
'ի

՚ի մաղթանս ծառայից քոց, բարեխօսու-
թբ̄ սրբոյ կարապետին և մկրտչի։ ՚Ի սմա
նէ դնեք պատկառեսցին, ո՛չ իշխելով
դժրել սպասաւորաց սորա։ Եւ որք գայ
ցեն ՚ի սա վս̄ կարեաց անձանց իւրեանց,
ողորմեսցիս նոցա և բժշկեսցես յիւրա
քանչիւր ախտից։ Եւ որք հաւատով յի
շեն զանուն սբ̄ եկեղեցւոյս ՚ի նեղութե̄
իւրեանց՝ կամ ՚ի վիշտս՝ կամ ՚ի յանկու
թիւս չարեաց՝ կամ ՚ի լլկմունս դիւաց՝
կամ ՚ի դետալիժութե̄՝ կամ ՚ի գազանաց
բեկութիւս՝ և կամ ՚ի վիշտս անհնարինս
որոգայթից, դու տր̄ ած̄ մեր՝ լուիցես
նոցա քոյով մարդասիրութբ̄. և ողոր-
մեալ զերծուսցես զնոսա։ Զի դու կա-
րօղ ես ամենայնի. և քեզ փառք յաւի
տեանս. ամէն։

Եկն ձայն յերկնից որ ասէ՝ եղեցի ձեզ-
ող̄ և կամիք. և որ ոք վս̄ անուան իմոյ և
կարապետիս՝ պանդխտութբ̄ քաղաքա-
վարիցի, հատուսցից նոցա զհատուցումն
բարի յաւէտուր այցելութե̄. և զմեղս թո-
ղից

ղին Նոյա։ և դուք եկայք՝ ի տեղւոջ լու
սաւորս. զոր պատրաստեալ էք ձերով
ջգնութեամբ։ և լցեալ սրբոյն երկրպա
գեցին առաջի սրբոյ սեղանոյն։ Եւ արտա
քըս ելեալ պօղիկարպոս գնաց առաջի
սրբոյ խաչին և սկսաւ աղաչել զա̅ծ վ̅ս
փրկութեան աշխարհին՝ զեկեալ թշնա
միսն խորտակել, և մնալ ալքատայ ՝ի
տեղւոջ իւրեանց։ Եւ յանկարծակի հա
սեալ զօրքն պարսից. իբրև տեսին զպօ
ղիկարպոս՝ հատին զպարանոց նր̅ և ընկե
ցին առաջի խաչին։ և եկն և մխութայես
՝ի դուռն եկեղեցւոյն՝ տեսին զկրօնա
ւորսն յարտասուս և ՝ի պաղատանս առ
ած. և յարձակեալ ՝ի վերայ նոյա, սպանին
առ ժամայն զեօթնեքին խոստաձարակսն
որոց անուանք են այսոքիկ, Թէոփիլաս.
Պօղիկարպոս։ Սիմէօն։ Յօհաննէս. Ե-
ալիփան. Դեմառէոս. Նարեսոս։ Սոքա
եօթնեքին կատարեցան ՝ի զօրայն պար
սից մեհրանայ. յամսեանն քաղոցի ՝ի չորսն
ընդերձակս աւուրն։ Եւ ինքեանք զօրքն

պար

պարտից մնայլին առդ մինչև յառաւօտն.
բայց գլուխն` եկեղեցւոյն ոչ գտին. զի
ծածկեալ տր ՚ի նոյանէ, և սկսան մրճօք
հարկանել. և զարհուրեալք ՚ի դղրդմայն
փախեան ՚ի տեղւոջէն: Իսկ նշխարք սըր-
բոյն կային անթաղ զաւուրս երիս. քան-
զի փախեան ամենեքեան. և յետ երից ա-
ւուրց եկն սպասաւորն եկեղեցւոյն և
թօթիկ հայրն` և տեսին զնմ զի վախճա-
նեալ էին` յապաստանս հարեալ տրտմե-
ցան յոյժ: Այս առեալ զնշխարս նոցա
իջուցին ՚ի մէջ դրախտին ՚ի կողմն հարա-
ւոյ, և եդին զնոսա առդ առ ջամանօն և
կրօնիդես, որք եղեալ էին ՚ի կեսարիոյ
զինի սրբոյն գրիգորի. և կանգնեալ խաչ
՚ի վերայ նոցա` բազմաց բժշկութի լինէր ՚ի
տեղւոջն: Իսկ ոմանք հասեալ յիշխա-
նէն մուշեղայ: տեղեկանալ վս զօրայն.
և իբրև տեսին զնոսա կոտորեալս` հիա-
ցան յոյժ, և փութանակի երթեալ պատ-
մեցին իշխանին մուշեղայ. և նորա լը-
ւեալ` զերիս աւուրս անկեալ դնէր ան

խօ։

խօս իբրև զմեռանելս։ Իսկ զօրքն ամաստու-
յին նմա թուղթ քրիստոնէական մխիթա-
րութե՛ և ասեն, Ճշմարիտ շառաւիղ-
երանելի՛ն յուսոյդ երջանիկ սպարապետ,
մի տրտմիր վասն նորա. զի աղօթիւք իւր-
եանց՝ ամուր աշտարակք եղեն աշխարհիս
բարեխօսք և օգնականք առ ած։ Բայց
դու առաւել գոհութի մատո՛ այ, որ ՚ի
քո ժամանակս յայսքան աստիճան առաքի-
նութե հասին. և հանդստեամբ փոխե-
ցան առ ած մարտիրոսական արեամբ. յաշ-
խատութե՛ ՚ի հանգիստ. ՚ի խոստացեալ
կենացս ՚ի դրախտին փափկութե. գոլով
մեզ միշտ բարեխօսք Արդ՝ արի սթափեա
և զեկեալն ՚ի վր մեր զմիհրան ուղարկեա
Եւ նորա իբրև ՚ի քնոյ զարթուցեալ՝ հրա-
մայեաց կոչել առ ինքն զվահան, զոր
իշխան կացուցեալ էր տարօնոյ, մինչ-
ինքն մարզպան էր. և ասէ ցնա, որդեակ
վահան՝ գիտես դու զաւուրս կենաց իմոց
զի այս 120 ՚ամ է՝ որ ես պատերազմ
եմ մղել. և սլաքով սրբել եմ զքիրոն ՚ի

Հայկա

Ծակմատէս ։ Իսկ այժմ ծեր եմ և գողդո
ջուտ. և ազնուական իմ ա͞ծ է և գիտէ. և այլ
ոչ ոք ։ զի որդին իմ մեռաւ երկոտասան
ամեայ ։ Արդ՝ դիր որդեակ զայս՝ ՚ի մտի
քում. եթէ վ͞ն եկեղեցւոյ մեռանիս՝ մար
տիրոս ես ։ Իսկ եթէ ՚ի վերայ մարմնա-
ւոր լինելոյ իջանես ՚ի մարտ, և այն գործ
քաջութեան է ։ Զի ես այլ ժառանգ ոչ
ունիմ. և երկիրս քեզ եղիցի և զաւակի
քում Արդ՝ արի և գնա՛ և իմաստութ͞բ
տիրեա զնա. և ս͞բ կարապետն եղիցի քեզ
ազնուական և պարիսպ. և աղօթք ս͞բ կրօ
նաւորաց յաջողէ և յաղթէ ։ Եւ Վահան
յանձին կալեալ զիրսն սկսաւ դեսպանս
կազմել և ուղարկել առ Մեհրան. զի
հաշտեսցի և գնասցէ ։ Իսկ նա ասէ, ոչ
այլ մինչ զիշխանն Մուշեղ կալեալ տա-
րայց առ արքայն պարսից Եւ Վահան ա-
ռաքեաց և ասէ, եթէ զերկիրս ինձ տաս
իշխանութ͞բ, ես տամ զիշխանն Մուշեղ
՚ի ձեռս քո. և ես կամիմ գալ առ քեզ
ապստամբութ͞բ ՚ի նմանէ, և հատանել
զերկիր

զերկնուղն ՚ի մէնջ։ Եւ նորա արձանեալ
կոչեաց զնա փութով։ քանզի յօժար էր
ծրայն. և ինքն իջանէր ՚ի մուշնանան. իսկ
մուշէղ յամուրն տղկան։ և այն զօրքն
որք զկրօնաւորսն կոտորեցին՝ անցեալ
յաստեղօն ամուրն՝ կային աւուրս եր-
կուս և ոչ ինչ կարացին առնել՝ ապա եր
թեալ կային առ միհրան. և մատուցին
նմա զնամ ձև ամրոցին. և նա խնդրեաց ՚ի
նմանէ զաստեղօն ամրոյն։ առէ վահան
ոչ այդ պէս տէր. այլ տուր ՚ի ձեռս իմ
4000 այր, որ գնամք ՚ի վ՟ր ամուրբերդին
տուր մտերիմք նորա են և գանձքն. գուցէ
քաւնայցեն և չտայցեն ՚ի ձեռս իմ, ա-
պստամբեալ զիս կարծելով։ Այլ այժմ
երթիցուք նախ յօձ քաղաք և յայլ ուրեք
Եւ միհրան տուեալ ՚ի ձեռս նորա 4.
հազար ընտիր առն և ձիոյ և իբրև գնա-
ցին ՚ի դուռն յօձ քաղաքին, դարան մա-
հու գործեալ վահանայ բանս արար քա-
ղաքին ինքերքս առնուլ զզօրսն պարսից.
և քանզի մերձէր մուտ քաղաքին՝ ՚ի ժա-
մուն

մուն տակաւք մտանէին. և որք 'ի դուռն անցանէին՝ զայն 'ի տուն առեալ 'ի զգեստուցն կողոպտէին. և զգլուխն կտրեալ արտաքոյ պարսպային յաներևոյթ տեղիս ընկենուին. և 'ի 4000 այրէն յիսուն միայն թողեալ էր 'ի գեօղն կոչեցեալ հարյս: Եւ՛ պատմէր ետ նոցա թէ յորժամ զձեզ ուղարկեմ 'ի միհրան, գնայցէք և ա՛յլ զօրս ածէք. և արարին այնպէս: զի գնացին 'ի միհրան և առին 'ի նմանէ 2 հազար այր ընտիր և եկին առ վահան. և նա այնպիսի գործ հնարեաց՝ զոր ոչ գիտային պարսիկքն:

Արդ յորժամ մօտեցան 'ի դուռն քաղաքին՝ տրեալ վահան քաղաքացեացն ըզպարսից զօրաց զերիվարսն և զհանդերձսն՝ 'ի դուրս կոչէր զնս. և խրատ ետ եթէ՝ յորժամ նոքա զձեօք հային՝ դուք միաբան 'ի քաղաքն դիմեցէք. և 'ի ներքս մտեալ զյաղթութն փողն հնչեցէք. և զդուռն քաղաքին բաց թողէք. զի կարծիցեն թէ առին զքաղաքն. և արարին այնպէս

այնպէս։ Եւ՛ իբրեւ տեսին պարսիկքն՝ թէ դիմեցին 'ի քաղաքն, խնդացին յոյժ. եւ դիմեցին ինքեանք եւս 'ի քաղաքն եւ սկսան մտանել 'ի նա. իսկ վահան փութով ընդ առաջ եկեալ զօրացն՝ աւետիս տայր նոցա. եւ 20 այր 'ի պարսից զօրացն աւետաւորս առաքէր առ միհրան թէ առաք զքաղաքն. եւ ինքն դարձաւ զհետ զօրացն պարսից. Եւ՛ իբրեւ մտին բազումք 'ի քաղաքն եւ այլքն դեռ մտանէին՝ սկսան կասկած առնուլ զիրայն. եւ կամէին յետս դառնալ. եւ զհետ մտեալ վահանայ սկսաւ կոտորել զնոսա եւ 'ի մօրսն լընուլ. եւ ինքն աստի եւ քաղաքացիքն անտի 40 այր մօրահեղձ արարին եւ զայլսն 'ի քաղաքն արգելեալ տայր կոտորել ըզգլուխսն եւ 'ի պարիսպն հանել։ եւ համար արարեալ յաւուր յայնմիկ սպանելոցն՝ գտին վեց հազար գլուխ հինգ միայն

պակաս ։

Եւ՛ հրամայեաց զամենեցուն զքիթսն եւ զթլփատսն կտրել. եւ ինքն առեալ ըզ-

զօրս

զօրս ձիւոր այրս 7 հարիւր՝ գնայ ՚ի մուշ և 400 թողէլ ՚ի յանցս մեղտայ և 200 այլ պշտենաւոր թողեալ ՚ի սանասայի ծմակն և ինքն 200 առէլ գնայ ՚ի մուշնաւանն ՚ի մեհրան։ Եւ մտեալ ՚ի սենեակն խօսե-ցաւ ընդ նմա այսպէս, ես փախստական եկի առ քեզ ՚ի զօրայն․ զի ոչ ՚ի քաղաքն թողլին զիս և ոչ աւարամանն ետուն մեզ այլև զիմ զօրս ՚ի քաղաքն արգելին․ և ես զամ աւասիկ փախստական։ Իսկ մեհրան խորհեցաւ ուղարկել ՚ի վերայ նորա հա զար այր․ և նա ասէ՝ և ՚ի քէն իսկ ապստամ բեալ են․ և զաւար քաղաքին և զկապուտ առեալ կամին անցանել ՚ի յոյնս։ Եւ բար կացեալ մեհրան առաքեաց ՚ի վերայ նորա երկու հազար այր․ և վահան խրատ տայր զօրացն՝ ՚ի գիշերի մի անցանել ընդ գետն մեղտայ․ այլ իջևանս առնել և ՚ի վաղիւն ապա գնալ․ գուցէ ոք թշնամի յարձակի ցի, և դուք չէք ընտել վայրուցն։ Եւ ասէ ցնոսա, հազար այր գնացէք ընդ ծմակն, և հազար ընդ դաշտն․ և ես նց

առաջ

առաջնորդս և ինքն եւ ՚ի միհրանայ գը-
նալ ուղարկել զնոսա։ Եւ՜ իբրև գնացին
յայն տեղի՝ ուր բաժանեին՝ առ միքեայ
հայրիւր այր զհետ նոցա որ ընդ ծմակն
գնացին և ինքն առ եւ 100 այր գնայր զկնե
նոց ։ և իբրև գնացին յեզր գետոյն մեղ-
տայ յայնկոյս՝ իջոյց զնոսա ՚ի քուն ա-
ռնել ։ և ինքն ՚ի պատրաստէ արարեալ զդա-
րանակալսն՝ հրամայեաց ծառայիցն կըր-
կել զերիվարսն արտաքոյ պատճառաւն ։ և
անհուպս արարեալ զնոսա յանկարծակի
հընչեցուցին զփողսն յետոյ և յառաջոյ։
և ՚ի մէջ առեալ իսկոյն բարձին զգլու-
խս նոցա և ընկեցին ՚ի գետն։ յորոց և ոչ
մի ոք կարաց ՚զերծանիլ։ և զերիվարսն
հրամայեաց ՚ի ծմակն տանել ։ և մինչ նոքա
զայն պատերազմն վըճարեցին, և յառաջ
եկին այլոյն, և նոքա դեռ չէին եկեալ
՚ի ծմակն՝ և կային մնացին մինչև նոքա
եկին և յայնկոյս անցեալ իջին՝ զի զայն
խրատ տըւեալ էր վահան ։ Եւ՜ իբրև ան
հետք եղեն՝ ասա կալեալ զնեղս կամր-

ջին

ջրին՝ ձայն սաստիկ հնչեցուցին շուրջա-
նակի զնորօք. և սկսան անխնայ կոտորել
զնոսա. և մի ՚ի նոցանէ, Թաքուցեալ ՚ի
մօրն և հեծեալ յերիվարն փախչէր ՚ի
մուշ. որոյ զհետ մտեալ երկուց ոմանց՝
և անցեալ յայնկոյս գետոյն ըմբռնեցին
և ջախջախեցին զգլուխն նորա։ Եւ միւս
ընկերն առեալ առ՛աջ տայր կմիւսն և
սաէր, պարսից խորտակարանն, առ զաղս
և կոչեցաւ անունն տեղւոյն՝ առ աղս մինն
չև ցայսօր. որև անուանեցաւ ՚ի վահանայ։
Իսկ վահան ածեալ զոմանս ՚ի նոցանէ ՚ի
մօրն, և այլ ո՛չ կարացին հանել զնոսա
անտի՝ այլ հեղձան ՚ի նմա. և որք ՚ի ցա-
մաքն էին՝ կտրեցին զգլուխս և զթլփա-
տրս նոցա և պահեցին. և ապա յետոյ ըզ-
գլուխսն ՚ի մօր անդր և ՚ի դաշտն ընկե-
նուին. և ըզ 2000։ երիվարսն ետ տա-
նել յողնու բերդն. և ինքն ՚ի վաղիւն
եկն առ միհրան։ Եւ հրամայեաց ծառայի
ցըն ճաշ առնել՝ և զմիհրան կոչել. և
նա վն խօթութենէն ՚ի սենեակին եմուտ, և

զնա միայն թողուլ ՚ի ներքս. և վա՛հանայ դռնապան լեալ՝ զեկեալ իշխանն դարձուցանէր ՚ի դրանէն՝ ասելով, հայոց մարզպանին չկարաց գալ ՚ի ճաշ: Եւ նա ժողովեալ ՚ի տաճար մի Ճ գինի մտին. և վահանայ առեալ զմախաղն յորում քիթքն և թլփատքն կային, ետ բերել առաջի միհրանայ. և նա տեսեալ զարհուրեցաւ. և ասէ, զի՞նչ է այդ, զրո՛յց տուր ինձ. և պատմեաց նմա կարգաւ զամենայն և ո՛չ մի բան թաքոյց ՚ի նմանէ զոր ինչ արարեալ էր: Եւ բարկացեալ միհրանայ՝ էառ զտէգն ՚ի ձեռանէ՛ ծառային և կամէր հարկանել զվահան. և նա ձգեալ զձեռն ՚ի սուրն որ կայր առաջի՝ կտրեաց զթլփատն միհրանայ և եդ ՚ի բերան նորա ասելով, դո՛ւ ես նախատեր զմեզ՝ դո՛ւ ես որ զկրօնաւորսն իմ զոխնան աշխարհի՝ ետուր սպանանել: Եւ կտրեալ զքիթըն ցուցանէր աչացն. և պատառեալ ըզփորն՝ ետ ծառային իւրոյ հանել զլերդն և դնել ՚ի բերանն: և հարեալ զդանակն

՚ի

՚ի փորն ետ թողուլ ՚ի չէք։ Բայց մինչ
յոյժ զթլփատուն կարօտեալ էր՝ ասէ, տուր
բանից նիշ եւ պատուէր ՚ի պարտիկն որ յա-
պահունիս, եւ ես ապրեցուցանեմ զքեզ.
եւ նա ետ նշան բանից եւ պատուէր բազում
երդմամբ. զոր երկոքեանն միայն գիտէին
Եւ իբրեւ ասաց զիրսն՝ այս կտրեալ
վահանայ զգլուխ նր, ետ ծառայիցն առ-
նուլ զարխնոտ զգեստն նր եւ պահել. եւ
զգեստին մաքրեալ յարենէն՝ կողմնեցու-
ցին զնա ՚ի մահճին եւ ծածկեցին քնոյ
պատճառանօք։

Եւ ՚ինքն ելեալ կոչեաց զպարտիկ դպիրն
միհրանայ ՚ի սենեակն, եւ տարեալ ՚ի մի-
հրանայ ողջոյն եւ բանից նիշ. եթէ յետ
երից աւուրց եկ ՚ի բլուրդ որ ՚ի վերայ
կոթ ձորոյ՝ հազար արամբ միայն. զի տես
ցուք զմիմեանս. եւ գրեաց դպիրն տվ
սայց վահան. եւ եդ ՚ի վերայ զմատանին
միհրանայ։ Եւ կոչեալ ՚ի հաւատարիմ
ծառայիցն արս չորս՝ ետ տանել զթուղ
թն առ վաշխր որ զհազար այրն ունէր

որք

որք և առեալ գնացին։ Իսկ վահան կո
չեաց զներսեհրակն և ասէ երթ կոչեա զայս
անուն իշխանն. և երթեալ կոչեաց. և
իբրև գայր իշխանն և մտանէր ընդ փողո
ցին խաւարչտին՝ վեց այր աստի և անտի
կային. և մինչ կամէր մտանել ընդ սե-
նեակն՝ անձապատեալ կալան զփողիցն զի
մի ձայն բարձցէ առ միւսն. և հարեալ
դանակաւ ՚ի սիրտ նորա՝ ձգեցին ՚ի միւս յար
կըն. ուր և զներսեհրակն և զդպիրն վասն
պատճառոյ չետ տանել ՚ի բանտն։ և
ինքն խաբէութեամբ. կոչէր զիշխանսն ՚ի
խորհուրդ, և նենգութեամբ այնպէս առ-
նէր։ և սպան յաւուր յայնմիկ իշխանս
ութսուն և 6։ Իսկ իբրև վճարեցան իշ-
խանքն՝ գնաց ինքն ՚ի տաճարն ուր զօրքն
էին ժողովեալ. և ետ հանել արտաքս
զխուլն և զայլ զաւառի մարդիկն. և
ինքն սկսաւ վտանգել զմնացեալ զօրսն
ասելով, արժան էր ձեզ զմարդարտեաց
պաակն մարզպանին գողանալ. արդ՝ հրա
մայեալ է ձեզ ամենեցուն մերկանալ.

մինչև

մինչեւ ցուցանիցէք զնա։ Եւ հանեալ զհանդերձսն ամենեցուն արգել զնոսա յերկոսին տաճարսն 1980. այր. և փակեալ զդրունս տաճարայն եւ բերել զԳլուխն միհրանայ. և կախեալ ընդ երդն ցուցանէր նոցա և ասէր, այս այն գլուխն է՝ որ խորհէր զմերոյ կորա-պետոխ զհիմն խլեր առնել, և զկրօնա-ւորսն հրով այրել։ Եւ զայս ասացեալ հրամայեաց վառել զերկոսին տաճարսն և ասէ՝ դուք ինձ մնասշատէք արարէք, որք զտաճարսն իմ այլ այրելցէք սրբեալ. բայց թէ կամի ած և ոչ կարապետոն՝ ես զայս փայտ ընդ ձեր և ընդ ձեր թագա-ւորին կառափին հանեմ. զի ես աշխա-տել եմ և զտաճարս շինել. և դուք մերկ-եք և ցրտայած։ Արդ՝ վասն իմ մեղայն թողութն և վասն իմ հարանցն՝ ջեռա-րուք այսօր և մի ամաչէք. և տուեր այդ-գերեզմանս ձեզ եղիցի. ջնորհելով պա-ուից արքայն։ և այնքան բորբոքեր բոցն ճարպոյն, մինչ զի քաղաքն ամ արբեալ

եղև

եղև 'ի հոտոյ ձէնձէրայն ։ Եւ՜ ինքն ժո
ղովեալ զկապուտ նոցա և զգանձս՝ ետ
տանել յամուրն ողկան· և զիշխանն մա-
ջէղ ետ ածել 'ի քաղաքն· և ինքն առեալ
երեք հազար այր՝ գնաց ընդդառաջ վա-
չիրայ ։

Եւ՜ երթեալ 'ի վերայ լերինն ընդ երկս
դիհս դարան գործեաց· և զդպիրն և ըզ
նուի՜րակն առաքեաց առ վաչիր զի կոչես-
ցեն զնա դաւ անդր· և գնացեալ նք կոչէ
ցին զվաչիր, որ իջեալ էր եզր ծովուն·
բայց նուի՜րակն և դպիրն ոչ ինչ գիտէին
զիրայն· զի վահան ոչ եթող զնոսա մօ-
տիլ 'ի զօրսն· և յորժամ այրեաց զնոսա
'ի տաճարին· 'ի պատճառս իրաց՝ յայլ
տեղիս առաքեալ էր զնոսա, զի մի գի-
տասցեն զիրսն ։ և զի զհանդերձս իշխա
նայն տեսեալ՝ կարծէին թէ միհրանեան
քրնեն ։

Արդ՝ իբրև գնացին և զվահանայ ասա-
ցեալսն պատմեցին նմա ոչ թէ յերեսաց
միհրանայ, առեալ վաչիրայ արս հազար

Հարիւր, եկն ՚ի վե՛ր լերինն։ և իբրև մերձե-
ցաւ ՚ի տեղին՝ եթող անդ արս հարիւր
իբրայէ՛, վասն այլոց թշնամեաց․ և եկել
եմուտ ՚ի վրանն առ վահան․ կարծելով
թէ միհրանն է։ Եւ իբրև ետես զնա վա-
հան՝ ասէ ցնա, վաչիր, զի՞նչ եդիք ՚ի մտի․
՚ի պարսից հաճա՛ռ կամիք դարձուցա-
նել զերկիրս հայոց։ և հրամայեաց ար-
գելուլ զզօրսն ՚ի հեռուստ․ և զվաչիր
գանեաց յոյժ, մինչև առեալ ՚ի նմանէ
նշան քանից կոչելոյ զզօրսն․ և ի հարկէ
ցաւոյն եւ նշան քանից առ զօրապետսն
և առ իշխանսն զալ փութով ՚ի տեղին։
Եւ՞ կաշառեալ զպարսիկ դպիրն եւ գր-
ռեալ այնպէս՝ թէ գայցեն ՚ի վաղի՞ն․ զի
յոյնք ասէ գալոց են ՚ի վերայ մեր․ և
տրո՞եալ զմատանին վաչիրայ՝ ուղարկեաց
զթուղթն յայն զօրսն՝ որք հեռի էին․
և դարձուցեալ զկոչնականսն յայն զօրսն
որք յետոյն էին, և կոչեցին զնոսա։ Եւ
կոչեալ զիշխանսն մի մի ՚ի խորան իւր՝
կապեաց զգլուխս նոցա, զոր ո՛չ ոք գիտաց

մինչև

մինչեւ զերծեալ ումն ՚ի նոցանէ անկա՛ւ ՚ի բանակն ։ եւ իբրեւ ետես վահան թէ յայտնեցան իրքն՝ ազդ արար այնոցիկ որք ՚ի դարանն էին. որք յարուցեալ յետուստ կողմանէ՝ փախստական արարին զնոսա ՚ի բերդակոյս կոթ ձորոյ ։ Իսկ որք բուն յետինքն էին ՚ի դարանի անդ՝ չյարեան իսկ. եւ որք բերդին ընդ դէմ ելեալ քարամբք եւ գլովք կոտորեցին զնոսա անխնայ. եւ եղեն փախըստականն յապահունիս որք 100 եւ իմացեալ դարանակալացն յարեան ՚ի վերայ եւ կալան զնոսա ։ Այդ ՚ի վաղիւն սկսան զօրքն գալ ՚ի նոյն տեղի լերինն. եւ վահան յառաջ գնացեալ ասէր՝ իջիք աստ ամենեքեան եւ թողէք զերիվարսդ արածիլ մինչեւ յերեկոյն եւ յերեկոյին աստ իջանեմք ՚ի վերա զօրացն յունաց եւ արարին այնպէս ։ Իսկ դարանակալքն դիմեցին ՚ի վ՛ր նոցա եւ կոտորեցին զերիվարսըն ՚ի զօրացն եւ փախստական արարեալ զնոսա ընդ արածանի՝ հանին ՚ի քարքէ. եւ զօրացն յաւուրսին տեսեալ զիրսն՝ ապաղաղ

կեցին

Կեցին և ասեն՝ վայ մեզ, զի կորեաք. և եղաւ անուն գաւառին Կորեայ լերին։ Եւ պահան առեալ զզօրսն իշխանացն ՚ի բռուն ձորն. և յարեան դարանակալքն աստի և անտի, և ՚ի մէջ առեալ կոտորեցին զնս. ոչ ողորմելով ումեք։ և հրամայեաց նոցա թողուլ ՚ի նոցանէ արս 40 զի զրուցատարք լինիցին պատահից արքային։ Եւ տուեալ նոցա զգլուխն մի հրամանատանիլ առ Թագաւորն և ասէ, այս մարզպան յորժամ եկն յերկիրս մեր՝ Հակառակել զօրքն է մեծամեծս գնդի խնդրէին, և ոչ կարացին գտանել. արդ քանզի յոյնք Թշնամիք էին մեզ ՚ի նսն ոչ իշխեցաք գնալ, այլ ձեզ ընծայական էաք. և ձեր զօրայդ գրնդի ոչ կայր. արդ կորեցաք զգլուխոյդ զայդ և խաղացաք։ արդ լուեսջիք՝ Թէ ՚ի շահատականաց եկեալ էր ՚ի բօսար քաղաք, որէ երկիր տաճկարանի և զաշտաձև և գլխաւոր գնդի խաղայ ՚ի նմա. առէք զգլուխս քեռորդւոյն ձերոյ, և եղիցի ձեզ գնդի յաղթէ յաղթ։ Եւ իբրև զնա-

ցին

ցին արքն և տարան և զգդլրուխն միհրանայ առաջի Թագաւորին և ասացին զբանն , խոստովանեցաւ յոյժ և ամաչեաց զանմօթնչյա

Հիւսէնականն ։

Եւ ՚ի միւսում ամին խորոխատացեալ՝ այլ զօրս առաքեաց ՚ի տարօնն ։ ՚Ի սոյն ամի՝ վանք սրբոյ կարապետին որ յինն ակնեանն էր՝ փլաւ. զի շարժ եղեալ եղև. զոր մուշեղ իշխանն տարօնոյ տրեալ գանձս բազումս հրամայեաց քարակոփս շինել . բայց ոչ ժամանեցին շինել որպէս առ ժամն էր՝ վասն պատերազմին ։ ՚Ի սոյն ամի շինեաց զսբ կարապետն և ինքն վախճանեցաւ. և կայ առ արծրունեաց ՚ի կողմն

արևելից ճակատուն ։

Յետ վախճանելոյն մուշեղայ՝ նստաւ վահան իշխանն մամիկոնէից տանն , և եկն ՚ի վանս գլակայ. և տօնյնծութե կատարեին ՚ի սբ կարապետն բազում քահանայիւք և եպիսկոպոսօք ։ Եւ ապա տեսեալ եկեղեցւոյն երկտասան դեօղս. ընչելով

զանուանսն յարքունականացն իւրանցն ։

՚Ի

Դի նոյն աւուրն վախճանեցաւ և երանելին Թաթուլ հայր գլխոյ վանիցն. և կայ՚ի թաղման՚ի հարանց բլուրն, որ է ընդաջմէ եկեղեցւոյն Դ աւետարանչաց բլուրն. իբրև ակն ՚ի մէջի. Եւ նորա յաթոռ նորա՝ մանուկն ստեփաննոս, որդի իշխանին արծրունեաց:

Սա բազում ուղղութիւ գործեաց ՚ի գաւառն տարօնոյ. և վերագոյն ընդունէին զնա քան զեպիսկոպոս. զի էր հայր որբոց փառաւոր և սբ վարուք. և ունէր ընդ ձեռամբ իւրով 398 կրօնաւորս : և վս սբ և պարկեշտ վարուցն՝ ամենեքեն իբրև զյօհաննէս կարապետն ընդունէին զնա : Սա խնդրեաց ՚ի սբ կաթողիկոսէն կալել զբերան գաւազանայն որք զլուսաբերան ուտէին. և եղև այնպէս. Սա յանդիմանեաց զիշխանին հարքայ, որ ունէր զկին եղբօր իւրոյ. և ածեալ ՚ի հաւանութի, կտրեաց ՚ի կնոջէն և արար զնա կրօնաւոր և ետ նմա շինել եկեղեցիս ՚ի թիլնաւան.

Փոխեցաւ առ Քս [illegible] :

Գրիգ

Գլուխ Երկրորդ. Վասն գալստեան Վախթանկայ երեսուն հազարաւ ՚ի Տարօն։ Որ և շինեաց զՈղական քաղաք, և շինելն Գահնակ։ 16.

Իբրև խաղայր թագաւորն պարսից ՚ի վերայ յունաց երկրորդ անգամ, ՚ի միտ ածեալ զմահն Միհրանայ քեռորդւոյ, իւրոյ առաքեաց զՎախթանկ ըզ նորին հօրեղբայրն երեսուն հազարաւ ՚ի Տարօն։ Որոյ եկեալ յապահունիս՝ նըստի անդ, և առաքէ հարկապահանջս ՚ի Հարքս, ՚ի Հաշտենս, և ՚ի Մուշ, խնդրել ՚ի նոցանէ զարքունական հարկն. և գրեցին առ նա իշխանքն երկրին և ասեն, եթէ Վահան լինի քեզ հարկատու, լինիմք և մեք՝ և տամք զհարկն. ապա թէ ոչ՝ ամօթալի գնալոց ես աստի։ Առ որ խորհ տայեալ Վախթանկայ՝ թողու կողմնապետս երկրին Ապահունեաց՝ և սաստիկ քինու վրդովեալ՝ գայ հասանէ ՚ի գլուխ Տարօնոյ։ Եւ՛ իբրև եկն՝ ետես անդ տեղի մի վայելուչ և արձակ, և սկսաւ անդ

շինել քաղաք և տնկել այգիս և բուրաստ-
տանս. և կոչեաց զքաղաքն պօրպէս՝
յանուն կնոջ իւրոյ պօրպէի: որ ՚ի մեր
լեզուս համեղ կոչի: Եւ զպարսկական
տարուշանն փոխեաց ՚ի գուռուն մատրանին
զոր հիմնարկեալ էր սրբոյն սահակայ
պարթևի մեծի: Եւ եղեալ ՚ի վր̄ լերինն
տօրոսի՝ շինեաց անդ ամրոց, և անուանեց
զահար. զի անդ գահալիժեցան ոմանք
երկուցեալ ՚ի վայրի գազանացն, կար-
ծելով զնոսա թէ ՚ի պարսից հեծելոցն
իցեն: Եւ սա և ՚ի վր̄ գոռոզ լերինն, և
շինեաց անդ աւան, և անուանեաց զնա
զլգուռս՝ յանուն որդւոյ իւրոյ զլգուռսի
Եւ գրեաց թուղթ առ վահան, որ ունէր
էր օրինակ զայս: Քաջ և հզօր բազկիդ
վահանայ հսկայի սպարապետի ՚ի դիցն
օգնութե̄ ողջոյն: Թէպէտ ընդ մահն
միհրանայ քեռորդւոյն իմոյ տրտմեցաք,
սակայն ընդ քո իմաստութի̄դ կարի յոյժ
զարմացեալ եմք: Եւ արդ՝ ես վասն սի-
րոյ և խաղաղութեան եկեալ եմ. եկ և

դու

դու տուր սիրով և երդուիր ինձ՝ տալ զՀարկն դիւանատական և Հնազանդ կալ արքային, և այլ ո՛չ ևս մնասցես ՚ի չարութիւն վասն նորա․ և տարեայիս, մնալով ՚ի փառս պատուոյ մեծի իշխանութեանդ Հայոց․ ողջ լեր։

Ե՛ Վահան գրեաց նմա պատասխանի առաջնոյ։

